

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

բանասիրական գիտ. թեկնածու

ԳՐԻԳՈՐ ՄԿԵՎԱՑՈՒՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԵՐՔՈՂԸ

Գրիգոր վարդապետը Սկևռացին ԺԲ.-ԺԳ. դարերի մաթեմատիկոս է, հասարակական-քաղաքական գործիչ: Լամբրոնում ծնված լիներու պատրիարքի կոչվել է նաև Լամբրոնացի: Դեռևս կենդանության օրոք նա ժամանակակիցների կողմից արժանացել է «անյաղթ հոներոք», «ճարտարութեամբ զարդարեալ», «զերագով և շնորհալի վարդապետ» պատվանուններին¹:

Աղբյուրներում նրան հիշում են իբրև բանասերող, երգահան, մաթեմատիկոս, ճարտասան, վարքագիր, թարգմանիչ, Լևոն Բ. թագավորի խորհրդապետ և խոստովանահայր, Սկևռա վանքի առաջնորդ և Տարսնի եպիսկոպոս ու հոգևոր հովիվ, ժամանակի գիտնական վարդապետներից և դավանաբանական պայքարի գործուն մասնակիցներից մեկը, որ իր գրական-հասարակական գործունեությամբ եղավ Ներսես Լամբրոնացու հետերորդը, նրա ավանդույթների շարունակողը:

Գրիգոր Սկևռացին բազմաժանր հեղինակ է: Գրել է ներբողներ, շարականներ, մեծ և փոքր ճառեր, քարոզներ, աղոթքներ, խրատներ, կատարել մեկնություններ ու թարգմանություններ: Գրիգոր Սկևռացու գրական ժառանգության մեջ իր գեղարվեստական արժեքով առանձնանում է Տիրամորը նվիրված ներբողը՝ գրված Աստվածածնի վերափոխման պոնին: Կ. վ. Քիպարյանը այն համարել է «գեղեցիկ և ընդիր ճառ մը, ուր չեն պակսիր նաև կեանքը և աշխոյժը»²: Ներբողի գրության թվականը հայրնի չէ: Ըստ Ն. Պողարյանի՝ այս երկը Գրիգոր վարդապետը գրել է Վարդան դիվանադարի և Նակոթ քահանայի խնդրանքով³: Ներբողը պարկանում է այն երկերի թվին, որոնց հեղինակային պարկանության խնդիրը բանասիրության մեջ վեճերի առիթ է տվել:

1 Ն. Յ. Տաշևան, Յուգակ հայերեն ձեռագրաց Մաթեմատիկոսին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 751: Ն. Պողարյան, Հայ գրողներ (Ե.-ԺԷ. դդ.), Երուսաղեմ, 1971, էջ 272:

2 Կ. Քիպարյան վրդ., Պարմություն հայ հին գրականության, Վենետիկ, 1992, էջ 459:

3 Ն. Պողարյան, նշվ. աշխ., էջ 272:

Թ. Տասնապետյանը հիմք ընդունելով Երուսաղեմի թ. 71 ձեռագիրը՝ որպես նորահայր բնագիր, «Ըստ բարուցն բուսոյ բնատրեալ անձն բանական...» սկսվածքով՝ Աստվածածնին նվիրված ներբողի առաջաբանը (թղ.5ա-32ա) հրապարակել է Գրիգոր Նարեկացու անունով՝ «Գրիգոր Նարեկացի երկրորդ ներբողեան Մարիամին» վերաբառությամբ⁴։ Իսկ Վենետիկի թ. 239 ձեռագրում գտնվող «Բարեբանեալ ես, ամենասրբոհի Աստուածածին...» փողով սկսվող ներբողը վերագրում է Գրիգոր Սկևռացուն՝ փողարակում ծանուցելով, որ այս ճառը Երուսաղեմի թ. 2351 ձեռագրում վերագրված է Գրիգոր Նարեկացուն⁵։

Հայրնի նարեկացիագետ Պ. Խաչատրյանի կարծիքով ներբողը վերագրելի է Գրիգոր Մագիստրոսի որդի Գրիգոր Մեծ Վկայասեր Կաթողիկոսին⁶։ Իսկ ըստ վաստակաշատ ձեռագրագետ Ն. Պողոսյանի՝ հիշյալ երկի հեղինակը Գրիգոր Սկևռացին է⁷։

Տիրամորը նվիրված ներբողը Գրիգոր Սկևռացուն են վերագրել նաև Գ. Զարբ-հանալյանը, Ա. Զամինյանը, Ն. Ոսկյանը, Մ. Չամչյանը, Ն. Աճառյանը, Կ. վ. Քիպարյանը, Գ. Հակոբյանը⁸։ Մեր համոզմամբ նույնպես այն պարկանում է Գրիգոր Սկևռացու գրչին։

Մեր հետազոտությունները հիմնված են Մաշտոցյան մատենադարանում պահվող ձեռագրերի, արարելքի մատենադարանների ձեռագրերի մանրաժապավենների և ձեռագրացուցակների՝ ձեռագրերի նկարագրությունների վրա, որի արդյունքում ուսումնասիրվել և համեմարվել են Մարիամ Աստվածածնին նվիրված վերոհիշյալ ներբողի բնական ընդօրինակությունները։

Սկևռացու՝ Տիրամորը նվիրված ներբողը հայերեն ձեռագրերում փաթեթավորված է հայրնի։ Գրիգորն այն անվանել են երբեմն աղոթք, երբեմն՝ ներբողյան կամ ճառ, երբեմն՝ բանք կամ փառ, երբեմն՝ ուղղակի պարմություն։

Ձեռագրերում ի՞նչ խորագիր ունի ներբողը և ո՞ւմ է վերագրված։ Խնդրի պահանջից ելնելով՝ ձեռագրերը խմբավորել ենք հետևյալ կերպ.

ա) Ամենահինը ՄՄ 1324 հեղինակային պարկանություն չունեցող ձեռագիրն է, ընդօրինակվել է 1281 թ., Հաղբարում։ Ունի համառոտ վերնագիր՝ «Պարմություն

4 Տե՛ս Թ. Տասնապետյան , Տիրամայր, Լիզբոն, 1998, էջ 12։

5 Տե՛ս Թ. Տասնապետյան, նույն փեղում, էջ 26։

6 Տե՛ս Պ. Խաչատրյան, Նարեկացին և այլ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 145։

7 Տե՛ս Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 273։

8 Գ. Զարբհանալեան, Հայկական հին դպրություն, Վենետիկ, 1897, էջ 715. Ա. Զամինեան, Հայ գրականության պարմություն, Նոր Նախիջևան, 1914, էջ 194, նույնի՝ Հայ եկեղեցու պարմություն, Նոր Նախիջևան, 1908, էջ 283, Ն. Ոսկեան, Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957, էջ 33. Մ. Չամչյան, Հայոց պարմություն, հ. Գ., Երևան, 1984, էջ 168, Ն. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա., Երևան, 1942, էջ 570. Կ. Քիպարեան վ., նշվ. աշխ., էջ 459, Գ. Հակոբյան, Սկևռայի գրական-մշակութային դպրոցը, Երևան, 1988, էջ 34։

ծննդեան եւ սննդեան Մարիամո», սկսվում է «Ըստ բարուցն բուսոյ բնատրեալ...» փողով⁹: Ձեռագիրը թերի է:

բ) ՄՄ 2322 ձեռագրում (ԺԷ. դ.) ներքողն ունի «Դրուագ գովեստի ծննդեան կուսին Մարիամո» վերնագիրը, «Ըստ բարուցն բուսոյ բնատրեալ...» սկսվածքը, դարձյալ առանց հեղինակի անվան¹⁰:

գ) Երկու ձեռագրերում՝ ՄՄ 2178 (ԺԴ. դ. հավանաբար, 1391 թ.) եւ Երուսաղեմի 208 (ԺԸ. դ.) ձեռագրերում, ներքողը դարձյալ առանց հեղինակային պարկանելության է, «Ըստ բարուցն բուսոյ...» սկսվածքով, խիստ համառոտ խորագրով՝ «Ի փոխումն միամորն»: Երուսաղեմի թ. 208 ձեռագրի նկարագրության ծանոթագրության մեջ Ն. Պողարյանը ասում է, որ Գրիգոր Սկևռացու ճառն է¹¹:

դ) Չորրորդ խմբի ձեռագրերում ներքողը սկսվում է «Բարեբանեալ ես ամենասրբոտի Աստուածածին...» փողով: Դրանք փաստմեկն են, որոնցից մեկը՝ Երուսաղեմի թիվ 2351 ձեռագիրը, Գրիգոր Նարեկացու անունով է¹², մեկը՝ «Գրիգորի միայնատրի»¹³, ինը՝ Գրիգոր Սկևռացու: Հիշյալ ինը ձեռագրերում ներքողն ունի «Գերագով եւ շնորհալի վարդապետի Գրիգորի Սկևռացույ միայնատրի է բանք պանծալի» խորագիրը¹⁴:

ե) Հինգերորդ խմբի ձեռագրերը փարբեր դարերի ընդօրինակություններ են: Այս

9 ՄՄ ձեռ. 1324, թղ. 397ա-400բ, 1281 թ., գրչ. վայր՝ Նաղբար, գրիչ՝ Նովհան, Բարսեղ, Աբրահամ:

10 ՄՄ ձեռ. 2322, թղ. 244բ-250բ, ԺԷ. դ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Մանասես դպիր:

11 ՄՄ ձեռ. 2178, թղ. 144բ-159ա, հավանաբար՝ 1391 թ., գրչ. վայր՝ Տաթև, գրիչ՝ Նակոր Ըռչյունցի: Երուսաղեմի Ս. Նակորյանց վանքի ձեռ. 208, թղ. 239ա, հավանաբար ԺԸ. դարի վերջ, գրչ. վայր եւ գրիչ՝ անհայտ, փնն Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., հ. 1, Երուսաղեմ, 1966, էջ 588:

12 Երուսաղեմի Ս. Նակորյանց վանքի ձեռ. 2351, թղ. 848, 1674 թ., գրչ. վայր՝ Բաղեշ, գրիչ՝ Թուման, փնն

Ն. Պողարյան, Մայր ցուցակ ..., հ. 7, Երուսաղեմ, 1974, էջ 489:

13 Երուսաղեմի Ս. Նակորյանց վանքի ձեռ. 939 (ՄՄ դժ. 1158, թղ. 226ա), գրչ. վայր՝ Մուշ, Առաքելոց վանք, գրիչ՝ Գրիգոր Նշեցի, փնն Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., հ. 3, Երուսաղեմ, 1968, էջ 490:

14 ՄՄ ձեռ. 5087, թղ. 295ա-298բ, 1694 թ., գրչ. վայր՝ Կարուց անապատ, գրիչ՝ Նայրապետ կր. Մահմուդյանցի, ձեռ. 7238, թղ. 224ա-227բ, 1721 թ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Կիրակոս Կեսարեցի, ձեռ. 4328, թղ. 65բ-72ա, 1737 թ., գրչ. վայր՝ անհայտ, գրիչ՝ Ալեքսան Վանեցի: Երուսաղեմի Ս. Նակորյանց վանքի ձեռ. 1207, թղ. 295ա, գրչ. վայր՝ եւ թվ. անհայտ, գրիչ՝ Տիրապետ աբեղա. փնն Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., հ. 4, Երուսաղեմ, 1969, էջ 339: Երուսաղեմի Ս. Նակորյանց վանքի ձեռ. 1486, թղ. 292ա, 1685 թ., գրչ. վայր՝ Մաճարք Ճուրճովն, գրիչ՝ Պետրոս. փնն Ն. Պողարյան, Մայր ցուցակ..., հ. 5, Երուսաղեմ, 1971, էջ 212: Վիեննայի Մխիթարյան Մաթենաղարանի ձեռ. 425, թղ. 171բ, 1552 թ., առաջ, գրչ. վայր եւ գրիչ՝ անհայտ, ձեռ. 431, թղ. 43ա, 1517 թ., գրչ. վայր՝ Նաճենի երկրի Խաչիկ անապատ, գրիչ՝ Նովհանես Մաղլի. փնն Ն. Յ. Տաշեան, Յուցակ..., էջ 877, 882: Վենետիկի Մխիթարյան Մաթենաղարանի ձեռ. 239, թղ. 238բ, 1335 թ., գրչ. վայր Երուսաղեմ, գրիչ՝ Ներսես Կրակացի. փնն Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրացի Վենետիկ, հ. 2, Վենետիկ, 1924, էջ 323: Վենետիկի 1072 թ. ձեռ., թղ. 237ա, 1624 թ., գրչ. վայր՝ Լվով, գրիչ՝ Աստուածաբուր, փնն Ս. Ճնմճնման վ., Մայր ցուցակ..., հ. Զ., էջ 1067:

խմբի մեջ մտնում են հինգ ձեռագրեր՝ ՄՄ թիվ 2622, 6615, Երուսաղեմի Մարենա-դարանի թիվ 71, 154գ, 3575 ձեռագրերը: Հիշյալ ձեռագրերում ներքոդն ունի «Բան գովեստի պարմագրաբար յաղագս ծնողեան, սնողեան, քաղաքավարութեան եւ վերափոխման ամենասրբուհոյ փառաւորեալ եւ միշտ կուսի Մարիամու Աստուածածնին, ասացեալ ի նորին ծառայէ եւ մաղթանաց հայցողէ յոգնամեղ մենաւորէ Գրիգորէ» խորագիրը, «Ըստ բարոցն բուսոյ բնաւորեալ...» սկսվածքը: Նշված հինգ ձեռագրերով ներքոդը մեզ է հասել ամբողջությամբ¹⁵:

Արդյոք Գրիգոր Սկեռացի՞ն է խորագրում նշված «յոգնամեղ մենաւոր» Գրիգորը: Այս ներքոդը Գրիգոր Սկեռացուն վերագրելը ճիշտ ենք համարում հետևյալ պարճառներով:

Ա. Սկեռացու եւ Նարեկացու ներքոդների համեմատությունը ցույց է տալիս, որ երկուսն էլ գրված են դասական սկզբունքով, երկուսում էւս վերջաբանն ավարտվում է Աստվածածնի նկարմամբ բարեխառությամբ թողություն գրելու բաղձանքով: Սկեռացու ներքոդում նկարելի է Նարեկացիական շունչը, դա բնական է եւ հասկանալի: Կրելով Նարեկացու ազդեցությունը՝ Սկեռացին մնում է ինքնուրույն: Ընդհանրություններ ունենալով հանդերձ՝ այդ ներքոդները, սակայն, տարբեր են: Տարբերություններն այնքան ակնհայտ են, որ բացառում է քննվող ներքոդի՝ Գրիգոր Նարեկացու գրչին պատկանելը¹⁶: Նարեկացուն հատուկ է սեղմ ձևի մեջ շարքան ասելու կարողությունը: Սկեռացու բոլոր հատվածները այնքան ծավալուն են ու ձգձգված, որ տասնյակ էջեր են կազմում: Սկեռացու ներքոդի բուն նյութն ըստ էության Մարիամի եւ նրա որդու կյանքի բոլոր դրվագների ավերարանական երկարաշունչ պատմմներն են: Ծավալուն ու ձգձգված են նաեւ նախաբանն ու վերջաբանը: Սկեռացու երկում իշխող է պարմողական տարրը: Նարեկացու ներքոդին հատուկ է բանաստեղծական շունչը, բուն նյութը գերծ է պարմողական տարրից, վերջաբանն ունի «Գրիգոր» բանակապը:

Ասվածը ցույց տալիս օրինակներով:

15 ՄՄ ձեռ. 2622, թղ. 268ա-299բ, ԺԸ դ., գրչ. վայր՝ Կապադովկիա, Շուշի, Կ. Պոլիս, գրիչ՝ Գրիգոր Կ.Պոլսեցի, Նովսեի Արցախեցի, Նովհաննես Թագվորյան, Աբել Մխիթարյանց, Գրիգոր Շաքարճյան: ՄՄ ձեռ. 6615, թղ. 216ա-260ա, ԺԸ դ., գրչ. վայր եւ գրիչ՝ անհայտ: ՄՄ դժ. 391, թղ. 5ա-151ա, 1321 թ., գրչ. վայր՝ Դրագարի, գրիչ՝ Վահան քահանա. տե՛ս **Ն.Պողարեան**, Մայր ցուցակ..., թիվ 71 ձեռագրի նկարագրություն, հ. 1, էջ 241: ՄՄ դժ 398, թղ. ռոճա-ռջև., 1737 թ., գրչ. վայր՝ Երուսաղեմ, գրիչ՝ Եղիա վարդապետ. տե՛ս **Ն. Պողարեան**, նույն տեղում, թիվ 154գ ձեռագրի նկարագրություն, էջ 454, Երուսաղեմի Ս. Նալոբյանց վանքի ձեռ. 3575, թղ. 1-76, գրչ. վայր, թվականը եւ գրիչը՝ անհայտ. տե՛ս **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ..., թիվ 3575 ձեռագրի նկարագրություն, հ. 10, էջ 555, Երուսաղեմ, 1990:

16 Գրիգոր Նարեկացու ներքոդների մասին մանրամասն տե՛ս **Պ. Խաչատրյան**, Նարեկացին եւ հայ միջնադարը, էջ 81-93, **Ա. Ազիկյան**, Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 106-110:

Գրիգոր Նարեկացու ներքողից

Գումարք խմբից դասուց երջանկացն
պարտասիրեն բիւրաբեղունիւք գովեսփի
զսկզբնալոյսն կենաց գոյից ի կիցս բանից
ըղծածայնուեց. եւ որպէս փողովք փա-
ղօք եւ քնարիւք զգայական սրփի շարժեալ
զգործի՝ զգերագանցեալն ի լոյս անմա-
լոյց ուրախութեամբ վերադարձաւ: Եւ
զանձաւ արարչութեաւ ներաշագործ ամե-
նասրբեղծն փութութիւն օրհնելով՝ պարճաւ
փառաբանութեան իսկութեան հասցիին
զհասարածոցս ամոնն գոյութիւն. որպէս
եւ ճշմարիտ բան ցուցանէ, ի սրբեղծանելն
ինձ զայս ամենայն, բոլր զօրաց դասուց
երջանկացն օրհնեսցին զիս... (Նախաբան)

Ո՛վ ամենասուրբ արարչընկալ փրփուի
եւ աստուածածին, որ զանրանելին երկնի
բարձրութեան եւ երկրի լայնութեան, ծովու
խորութեան եւ անդնոց անհատութեան, զի
քէն մարմնացեալն իսկութեամբ էութեան
յորովայն անձուկ սուրբ թում սնենկի կրել
զօրեցեր: Առ որ հայեցեալ երջանկին Յո-
բայ՝ պարտաբանեաց ի ձեւ առակաց,
զանրաութիւն մեծին սքանչացոյց, յու-
մեան դիմաց ասացեալ՝ եթէ չունիմ գնաւ, եւ
զայլմէ՝ թէ չէ ընդ ինեւ: Որում երգակցեալ
վեհին Յովհաննու ի բանն Յայրնութեան
ասէ հիացմամբ. փախեալ երկին եւ երկիր
ի մի սասանութիւն ի դիմաց Էին, եւ փռի
ոչ գրաւ. քանզի արդարեւ յաւիտ անձկու-
թեամբ ամփոփին ի բերումն բովանդակու-
թեան արարչական բանին հանգարեան:
(Բուն նյութից):

Գերագանց չափոյ կշռման երկրային
բնութեան, եւ քրովբեականն նախադրու-
թեան եղեալ վեհական. սրբուի պայծառ
առաջապար փրկչին Քրիստոսի, եւ նորուն
իսկ փեսավորիչ վասն մեր. ծունր կրկնեա-
ցի արժանապարհ թումոյ պարկերի. հայ-
ցեալ վասն մեր ամ ծնեալոյ ի քէն Աստուած
ի մարմնի:

(Վերջաբանից)

Գրիգոր Սկեռացու ներքողից

Ըստ բարոյցն բուսոյ բնատրեալ անձն բա-
նական, իսկապէս ունակութեամբ ըստ իմանալի
դիպման ամ ազգակիցն ձգիլ փեսութիւն եւ բաղ-
ձանս եւ զարէն հրոյ, անխոնարհ կայիւք, եւ թէ
ոչ ընդ ծանու եւ հալլեցող իմիւք կապեսցի, միշտ
ի վեր կոյս շարժիւք ընդանեալ համասեռիցն
վերաբերի: Եւ ոչ թէ ի սպորեւ միայն ի փնջալի
ելիցն ոչ քարշեցին, այլ եւ ինքեամբ զվայրաբերն
ի բարձրն կոյս գերագոյին փրփանաց, եւ լուսա-
փայլ հրամանին հապարակութեան վերածիցեն,
ըստ ասելոյն «որ սիրէ զիս՝ զբանս իմ պահեսցէ»...
(Նախաբան)

Եւ արդ սկսցուք ուսփի սկսանելն է արժան,
զեղծին իմաստութեան ունելով առաջնորդ մաղ-
թանաւք պարճաթի բանիս, ամեներջանիկ եւ
փառատրեալ կուսին Մարիամու, զի որ հաճեցաւ
հովանաւորիլ նմա եւ մաքրագարդել յամենայն
խաղապմանց մարմնոյ ի փառաւ բնակութեան
էակցի իւրոյ, փացէ եւ բան արժանաւոր խաւսա-
ղաց ի պարփի փառաց նորա:

Բազմերջանիկս այս եւ ամենագով կոյսս, պա-
րտեալ յերկնատրաց եւ յերկրատրաց, դուստր էր
Յովակիմայ եւ Աննայի ի կրկին ցեղից պարտե-
ցելոց ի մէջ Իսրայէլի, թագաւորականին եւ քա-
հանայականին:

Ըստ հար յազգէ թագաւորութեանն, վասն
զի Յովակիմ էր ի զարմէ Յուդայի եւ Դաւթի: Իսկ
ըստ մար ի ցեղապետութենէ անփի Ղեւեալ քան-
զի Աննայ դուստր էր Մարթան քահանայի ի
Բեթղէէմ: (Բուն նյութից):

Բարեբանեալ եւ, ամենասրբուի Աստուածա-
ծին, քանզի լոյսն առաջի եւ արարչական ամե-
նակալն հայր զծնունդ էական իւրոյ բնութեան
անմարմին եւ անոյր քան ժամանակ գոյց ին-
քեան ամենայնի եւ հանգունապիւղ բնութեամբ,
զօրութեամբ, անեղութեամբ եւ արարչութեամբ,
զոր ըստ անսահման սիրոյն եւ անչափ բարեբա-
րութեան ի փրկութիւն մերասեռիցն առաքեաց:
Նաճեցաւ ի ձեռն քո սպասատրութեան զնախա-
սահմանեալն ժամանակաբար մարմնաւորապէս
կարարել:

(Վերջաբանից)

Բ. ըստ Ն. Պողարյանի՝ «Բան գովեստի պարմագրաբար...»-ը գրվել է Վարդան դիվանադարի խնդրանքով: Գրիգորը Վարդանի խնդրանքով գրել է նաև «Խրապը»¹⁷:

Գ. ներքողի վերագրումը Գրիգոր Սկևռացուն հիմնավորվում է նաև այն պարճառով, որ մեր ասածը հասարակելու համար ունենք ձեռագրական փաստեր. կան գրչագրեր, որոնց խորագրերում որոշակիորեն Գրիգոր Սկևռացին է վավերական հեղինակը:

Քանի որ ներքողն ամբողջական փեսքով մեզ է հասել հինգերորդ խմբի ձեռագրերով, հարկ է նախ անդրադառնալ դրանց:

Պահպանված ու մեզ հասած հնույթյամբ երկրորդ ձեռագիրը Երուսաղեմի թիվ 71 ճառքնոսրին է: Այն 1321 թ. Դրագարկում բոլորգրով ընդօրինակել է Սյունիանուսի որդի Վահանը: 151թ. Էջում թողած հիշատակարանում գրիչը, դիմելով Տիրամոր բարեխոսությանը, քավություն է աղերսում, խնդրում է նաև, որպեսզի հավարացյալները իրենց աղոթքներում հիշեն այս ճառի հեղինակ մեծ վարդապետ Գրիգոր միայնացյալին. «Ձմեռ վարդապետն Գրիգոր միայնացեալ, որ է երգաղ սրբոց ճառիս, յիշեալիք ի սուրբ աղաթս մեր, ո՛վ փառաւոր աստուածասէրք: Ընդ նմին եւ գողորմելի գրիչս Վահան, որ յոյս առեալ դարձի՛ գղէմս ի յերկիր եղեալ պաղարիւմ մօրն Յիսուսի. բարեխօսեա եւ մաղթեա զբաւութիւն փառաւորացս, դո՛ւ զաւրաւոր փրկանակ կենաց իսկոնի՛ երկնի, քեզ արհնութիւնք ձայնից եւ բուրմունք խնկոց ի մենայնի: Նաեւ զմիաբանք Սր. Ուխտիս կենդանեաց եւ ննջեցեոց եւ ծնաւորաց իւրեանց: Եւ ամենայն հաւարացելոց եւ որոց ամէն ասեմ. ամէն»:

Որ Գրիգոր միայնացյալը Գրիգոր Սկևռացին է, հաստատվում է նույն ձեռագիրը:

Ձեռագրի առաջին էջին ոչ կարևոր գրություններ են: Երկրորդ էջը դարարկ է: Երրորդ էջի ցանկում ճառի ստույգ հեղինակ է հիշվում Գրիգոր Սկևռացին. «Գրիգորի Սկևռացոյ է ճառս ի սբ. Կոյսն Աստուածածին»։ Նշանակում է՝ ավելի հին օրինակում եղել է Գրիգոր Սկևռացու անունը, եւ գրիչը, հետեւելով ավանդույթին, նույնությամբ գաղափարել է: Չորրորդ էջում գրություն է այն մասին, թե «ինչ կա ի ճառքնդիրս հավաքած»: 5ա-151ա էջերում «Բան գովեստի պարմագրաբար յաղագս ծննդեան եւ սննդեան եւ քաղաքավարութեան եւ վերափոխման ամենաարբուհոյ փառաւորեալ եւ միշտ կուսի Մարիամու Աստուածածնին ասացեալ ի նորին ծառայէ եւ մաղթանաց հայցողէ յոգնամեղ մենաւորէ Գրիգորէ» խորագրով ճառն է՝ «Ըստ բարուցն բուսոյ բնաւորեալ...» սկսվածքով:

Ձեռագրի ամենավերջին դարարկ նոր թերթին շղագրով գրված ավելի ուշ ժամանակի մի գրություն եւս հաստատվում է, որ սույն երկի հեղինակը Գրիգոր Սկևռա-

17 Տե՛ս Թ. Միհայան, Վարդան դիվանադարի ինքնության խնդրի շուրջ. «Էջմիածին», 2006, Ե., էջ 27-33:

ցին է. «Ընթերցայ գեղեկից փառս և ընդօրինակեցի գներբողեան ճառն Գրիգորի Սկեռացոյ, ևս չնչին ծառայս Աստուծոյ Տ. Ն. Թ. Սավալանեանց, դասարու և քարտուղար սրբոյ Աթոռոյս Երուսաղեմի, ի թիւ Փրկչի 1855, ի 8 օգոստոսի»: Ձեռագրի՛ց, թե՛ մեկ այլ աղբյուրից է հայտնի Սավալանյանին, որ երկի հեղինակը Գրիգոր Սկեռացին է, դժվար է ասել:

Երուսաղեմի թիվ 3575 ձեռագիրը հիշարակ է Ս. Նակոբյանց վանքին՝ «ի վայելումն Սարգիսի վարդապետի Եղոկիացոյ»: Ձեռագիրը գրված է վարժ նուրբգրով, թղթյա է և թացությունից վնասված: Գրչության վայրը, ժամանակը և գրիչը անհայտ են:

Մադյանը, որ բաղկացած է 76 թերթից, ամբողջությամբ Գրիգոր Սկեռացոյ՝ Աստվածանին նվիրված ներբողն է՝ խորագրում հեղինակի անվան հիշարակությամբ. «Բան գովեստի Ս. Կուսին Մարիամու, Գրիգոր Սկեռացի» ընդհանուր վերնագրով, ունի նաև ենթավերնագրեր, հար և նման երուսաղեմյան թիվ 71 ձեռագրի կառուցվածքին, ինչն էլ ենթադրել է Կալիս, որ կարող է օրինակված լինել վերջինից:

Երուսաղեմի թիվ 154 ձեռագիրը չորս հատորից կազմված ճառընտրի է, ընդօրինակվել է 1737-ին, Երուսաղեմում, հավանաբար թիվ 71 ձեռագրի գաղափար օրինակից:

Գրիչը և ծաղկողը Նովսեփի որդի Եղիա վարդապետն է: Ձեռագիրը թղթյա է, նուրբգրով գրված: Ճառընտրի երրորդ հատորի Ռ-ՌԾԱ.-Ռ-ՉԵ. էջերում վերոհիշյալ ներբողն է: Ն. Պողարյանը ձեռագրի նկարագրության ծանոթագրության մեջ համեմատում է ձեռագիրը Երուսաղեմի թ. 71 ձեռագրի հետ՝ դրանք նույն հեղինակի գործը համարելով, ավելացնում, որ «մենատր Գրիգորը» համանուն Սկեռացին է:

ՄՄ թ. 2622 (1804-1856 թթ.) և թ. 6615 ձեռագրերը (ԺԸ. դ.) ուշ դարերի ընդօրինակություններ են: Այս ձեռագրերում ներբողը վերագրված է Գրիգոր մենավորին:

Առձեռն ունենալով ՄՄ թիվ 2622, 6615 ձեռագրերը, Երուսաղեմի թ. 71 և 154 գ. ձեռագրերի մանրաժապավենները, համեմատեցինք դրանք՝ ելակետ ունենալով Երուսաղեմի թ. 71 գրչագիրը: Երեք ձեռագրերի մանրագնին քննությունն ու բնագրային համեմատությունները թ. 71 ձեռագրի հետ ցույց են տալիս, որ այդ բնագրերը իրար շար նման են և թույլ են տալիս ասելու, որ նրանք նույն խմբի ձեռագրեր են: Ծաղ որոշ է, որ կամ թ. 71 ձեռագիրը գաղափար օրինակ է եղել ՄՄ թ. 2622 և 6615, երուսաղեմյան թ. 154-ը, ենթադրում ենք, որ նաև 3575 ձեռագրերի համար, կամ բոլոր հինգ ձեռագրերը բխում են նույն աղբյուրից:

Առաջին չորս խմբի ձեռագրերում ներբողն ամբողջությամբ չի պահպանվել: Երբեմն այն, ըստ պարզվածության ճաշակի, մրաժված տրոհվել է և ներկայացվել հարվածաբար՝ ուսումնասիրողների կողմից դիտվելով որպես առանձին երկեր:

Ասվածը հիմնավորելու համար անդրադառնանք Վենետիկի թ. 239 ձեռագրին, մանավանդ, որ Թ. Տասնապետյանը Գրիգոր Սկեռացու ներքողի համար որպես աղբյուր նշում է հենց այդ ձեռագիրը: Ձեռագիրը նկարագրել է Բ. Սարգիսյանը և շար գեղեցիկ մի գնահատական է տվել ներքողին. «Նիսանալի է ներքողեանս թե՛ լեզուին և ոճին բարձրության, և թե՛ խորախորհուրդ վարդապետությանց համար: Իր քրեականի մեջ եզական է, մանաւանդ պերճախօսական ձևոց առարկութեամբ և դարձուածներով, ինչպէս Սրբոց Գրոց և Նարանց գոհարներու անմեղաճարարար յեռումներով: Կարծէք թե երկրորդ Նարեկացի մ է և Բեռնարդոս առ ամենասուրբ Կոյսն քրածած մշտաբերբեր սիրովն ու աստուածային գաղափարականովն: Գիւրաւոր է և սրտահաճոյ կոչը ուղղեալ առ Տիրամայրն՝ ժողովրդեան ամեն դասակարգի, վիճակի և պայմանի համար»¹⁸:

Ձեռագիրը գրվել է 1335 թ., Երուսաղեմում, Ներսես Կրակացի աբեղայի ձեռքով, միջակ, ցանցառ և հստակ բոլորգրով, բամբակյա հասարկեկ, ողորկ և գորշավուն թղթի վրա: Ձեռագիրն ունի բազմաթիվ զարդագրեր, լուսանցազարդեր՝ մեծ, միջին և փոքր, մերթ սրճագույն, մերթ կարմիր, մերթ էլ կարմիր ու սև: Չա էջում կիսախորան և՛ գղթորախառն մուր դեղինով և շար գեղեցիկ: Կիսախորանի մեջ ծաղկողի անունն է՝ Ներսես, հավանաբար գրիչն է: Ձեռագիրը կազմել է Մարթնոսը, քերը նախ գրիչն է, ապա՝ Խոճա Մուրադը: Մեծ Նայթում ճանապարհորդելու ժամանակ Ներսես վ. Սարգիսյանը նվեր է ստացել ձեռագիրը, և 1852-1860 թթ. այն մտել է հավաքածուի մեջ:

Մարյանը ճառերսիր է: Ըստ գրչի կոչվում է նաև «Տօնակնի ձագ»: Ձեռագիրը, որ գրիչը որակում է «գերապայծառ գիրքս ցանկալի և զանազան պտղով լի, դրախտ ախորժելի և ծաղկաւեր բուրասարանի», բովանդակում է Երեմիական քրոնիկան վերաբերող ճառեր, երեւելի այբերի վարքեր, վկայաբանություններ, Ս. Գրոց պարամոնություններ, ներքողական ճառեր: Նիշարակարանները բազմաթիվ են, գրեթե ամեն ճառից հետո կա մի հիշարակարան՝ ռամկախառն բառերով: Գրիչը 465ա էջի ուրանավոր հիշեցնող ընդարձակ հիշարակարանում հիշարակում է բազմաթիվ հեռու և մոտ, արյունակից և հոգեկից բարեկամների, կոկողների, ծաղկողների, սրացողների անուններ: Նիշարակարանից իմանում ենք, թե նա ինչպիսի դժվար ու քրագնապալի օրերում ու հանգամանքներում է գրել մարյանը, դրա համար էլ «խելքը վրան չէ», և քրեղ-քրեղ ընդհարելով, երբեմն հետ ու առաջ է ընդօրինակել, երբեմն վրիպել ու սխալ է գրել: Իսկ երբ «բնությամբ զվարթ է եղել», երբեմն էլ կարակարան է, դրանով իր փխրությունը կամեցել է փարսալել: 468բ էջում սրացողի հիշարակարանն է՝ գրված քարքեր բոլորգրով: Թուղթը մեծ մասամբ պարամոնոված լինե-

¹⁸ Տե՛ս Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ..., հ. 2, էջ 339:

լու պարզաբանությամբ կարողացվում են հարուկներ բառեր: 238-ր էջում Գրիգոր Սկևռացու ներքողն է. «Գրիգորի Նայոց վարդապետի եւ մեծ ճգնաւորի Սկևռացոյ ասացեալ ներքողեան ի փոխումն Աստուածածնին, սակաւ մի ի շապէն» խորագրով:

Մենք ընդգծում ենք «սակաւ մի ի շապէն» բառերը՝ ցույց տալու համար, որ վերոհիշյալ խորագրով ներքողյանը մի հարված է մեկ այլ ամբողջական երկից: Այսինքն՝ գրիչն օրինակել է ներքողից այն հարվածը, որը ցանկացել է պարզաբանել: Իսկ այն ոչ այլ ինչ է, քան Աստվածածնին նվիրված ներքողի՝ փառաբանության հարվածը:

Վենետիկի թ. 239 ձեռագրին է հարում Երուսաղեմի թ. 939 ձեռագիրը: Այդ ձեռագրի 226 էջի ստորին լուսանցքում գրիչը շղագրով ավելացրել է. «Գրիգորի Սկևռացոյ ճառէն է»¹⁹: Նշանակում է՝ հեղինակային ամբողջական օրինակում եղել է Գրիգոր Սկևռացու անունը, գրիչն էլ, օրինակելով պարզաբանված հարվածը, լուսանցքում ավելացրել է այն: Այս ձեռագրական փոփոխությունը խոսում էն հոգուր Գրիգոր Սկևռացու եւ բավարար հիմք են տալիս, որ չորրորդ խմբի ձեռագրերի խորագրերում իբրեւ հեղինակ հիշված Գրիգոր միայնավորը նույնացվի Գրիգոր Սկևռացու հետ եւ համարվի հավանական հեղինակ:

Այս ձեռագրում եւ չորրորդ խմբի մեջ մտնող եւս ուր ձեռագրերում խնդրո առարկա երկը կոչվում է «բանք», իսկ ՄՄ 7238 ձեռագրում՝ աղոթք²⁰:

Ներքողը, անկախ նյութից, գովեստ է գեղեցիկ հարկանիշների ու առաքինության ներքող, բարի գործերի մասին: Բոլոր ներքողներին համար պարտադիր են ձեռակառուցվածքային երեք հարկանիշներ՝ նախաբան, բուն նյութ եւ վերջաբան: Ելնելով ներքողների դասակարգումից՝ Գրիգոր Սկևռացու խնդրո առարկա ներքողը գովասանական ներքող է:

Նախաբանում ներքողագիրը, հայտնելով ներքողի խորհուրդը, երկյուղածությամբ է մոտենում իր գրելիք նյութին, խոստովանում է իր ապիկարությունը, իրեն համարում է փոքր ու անկարող, որովհետեւ ո՛վ կհամարձակվի գրել Տիրամոր մասին. «Զի՛հարձոքս համարձակեցի բան գովեստի եւ կամ վիպասանութեան: Զի պարմաբան սմա ըմբռնեմ երեսն հրեղէն լեզու գուարձնոյն որ գճուրախ լերն աւերարանաց, եւ գառ ի նմանէ ծնիցելոց՝ յափրեմական եւ անվախճան թագաւորութիւնն քարոզեաց: Եւ դրուարիչ սորա ի ճան իւրն մաքուր միտք եւ լեզու. որ գիտմանից ազգաց, որ ընդ երկնաւ գերանութիւն յինքն հաւաքեաց: Իսկ նսեմացելոց ոգով, եւ խաւարելոց մարտք եւ աղքատացելոց լեզուաւ պիղծ շրթոնս տնաւաց, եւ ի մէջ պղծաշուքին ժողովրդեան բնակաւաց, երկնաւորացն վեհագունի լինել վիպասան՝ ո՛չ է անպա-

19 ՄՄ դժ 1158, թղ. 226ա:

20 Տես չորրորդ խմբի ձեռագրերի ծնթ.:

տիժ»։ Իսկ երբ համարձակվում է «բան գովեստի» կամ «վիպասանության», սկսում է արժանի տեղից՝ Աստվածածնի զարմի նկարագրությունից։

Անուայի եւ Նովակիմի աղջիկն էր Մարիամը՝ թագավորական եւ քահանայապետական ցեղից։ Խոր ծերության հասած ծնողները ամուսնային պարճառով անգավակ էին մնացել եւ անդադար աղոթում ու խնդրում էին Աստծուն՝ իրենց զավակ պարգևել։ Աստված լսում է նրանց ջերմեռանդ աղոթքները եւ պարգևում մի աղջիկ, որին կոչում են Մարիամ, որ թարգմանվում է «լուսավորյալ»²¹։ Մարիամն ընծայվում է Կաթարին, Կասնչորս քաղաքում ունակում եւ ամուսնանում է Նովսեփի հետ։

Ներքողի բուն նյութը ոչ այլ ինչ է, քան ավետարաններից եւ ավանդությանը մեզ հասած հայրնի պատմությունները՝ Գաբրիել հրեշտակի ավետումը, Հիսուսի Ծնունդը Բերդեհեմ քաղաքում եւ մոգերի երկրպագությունը, երեսնամյա Հիսուսի Մկրտությունը եւ չարչարանքները, Տիրոջ Հարությունը եւ Համբարձումը, Կույսի վերափոխումը։ Այս ամենը հեղինակը պատմում է առանձին-առանձին ենթախորագրերով՝ երկարաշունչ ու պարմողաբար։

Ըստ ավանդության՝ Տիրամայրը խաղաղ ու հանգիստ մահ ունեցավ։ Բարեպաշտ քրիստոնյաները եւ առաքյալները ամփոփեցին նրա մարմինը։ Բարդողեմեոս առաքյալը, երբ իմացավ Տիրամոր մահը, սաստիկ վշտացավ, որ չի արժանացել նրա Կրթությանը ու չի ընդունել վերջին օրհնությունը, եւ ցանկացավ այցելել նրա գերեզմանին։ Երբ գերեզմանաբարը վերցրին, գերեզմանը դարձավ զրան. չկար Տիրամոր մարմինը, այնտեղ էին միայն պարաներները։ Ավանդության համաձայն Կույսը փոխադրվել էր երկինք²²։

Ներքողի բովանդակությանը հաջորդում է Կույսի փառաբանությունը, որ սկսվում է «Բարեբանեալ եւ ամենասրբոհի Աստուածածին» տողով։ Փառաբանության այս հատվածը այնքան գեղեցիկ է հորինված, որ այն կարելի է դիտել որպես արձակ բանաստեղծություն։ Այս հատվածը, որ համարվել է ինքնուրույն ներքող, գրիչների կողմից առավել շատ ընդօրինակված մասն է։

Ներելով Ս. Գրքին, Հայ եկեղեցու դավանաբանությանը եւ ավանդույթին՝ ներքողագիրը ամենաջերմ ու սրտառու կերպով, փառաբանական ամենագեղեցիկ մակդիրներով է գովերգում Տիրամորը։ Այստեղ Աստվածամայրը ներկայացվում է իր բոլոր շնորհներով՝ սրբությանը, կուսությանը, մայրությանը, բարությանը։ Աստվածամայրը անսպառ աղբյուր է, որտեղից բխում են արդարությունն ու ճշմարտությունը, ճառագում է կենաց լույսը։ Մարդկության համար կենսական ու բարերար նշանակություն ունեցող արեգակ, ծաղկող ծառ, դրախտ եւ բարության որթ է նա։

21 Մարիամ անունը մեկնաբանվում է նաեւ իբրեւ Աստծո սիրելի, Աստծուց սիրված։

22 Ա. Մանուկեան **արք.**, Հայ եկեղեցու տոները, Թեհրան, 1999, էջ 192։

«Արեգակն՝ յորմէ արարածք պայծառացան, լոյս՝ որով խաւարեալք լուսաորեցան, դրախտ՝ յորմէ գեղեմայ րնկողն րեսաք, ծառ՝ ուտի անթառամ ծաղիկն վայելեցաք, բարունակ՝ յորմէ քաջագուարթ ողկոյզն կթեցաւ, ողկոյզ, ուտի ուրախարար գինին բղխեաց, երկիր, ուտի ճշմարտութիւն բուսաւ, երկին, յորմէ արդարութիւն երեւեցաւ»։ Իբրեւ մայր՝ Ս. Կույսը ներկայանում է մայրական քնքշությամբ ու նրբագեղությամբ. «Որովայն աստուածակրող, մայր աստուածամեղ, աստուածաշնչաւի ձեռք, աստուածահանգիստ գիրկ, աստուածաղիպած սրինք, աստուծապաճոյճ ձեռք, աստուածաբարձ բագով, աստուծամերձ բերան, աստուծաձայնոյր շուրթն, աստուածահայեաց աչք, աստուծախօս լեզու, աստուածընկալ խորան, աստուծաբնակ քանար»։

Տիրամայրը դրվարվում է որպէս «Աղբիւր իմաստութեան, խորան աստուծակերպ եւ փաղաւար աստուածընկալ, շուշան ի մէջ փշոց եւ ծաղիկ դաշտի, հովիւր շուշանի եւ շեղջ ցորենաբեր, բուրվառ ոսկեղէն եւ իմանալի սափոր պարուական, քան զամենայն ոսկի»։

Սկեռացին դիմում է Աստվածամոր բարեխոսությանը. «Յայցես Որդոյ քո եւ Աստուծոյ մերոյ գիրկութիւն... քանզի մերձ ես ահա բարեխօսող առ պարգեւարուն... Եւ համարձակութիւն ունիս որպէս Մայր առ Որդի, վասն որոյ մաղթեա զի քաղցր ակամբ նայեսցէ եւ լուսաորեսցէ գխաւարեալս մեղօք»։

Ապա ներբողասացը, իր անձը նմանեցնելով անառակ որդուն, հայցում է Տիրամոր միջնորդությունը՝ հայրական հարկի փակ ընդունելու եւ չանրեսելու իր մերժված ու փառապած անձը. «Նայցես՝ նմա գրարամերժեալս անառակ վարութ, գվարնողս խոզարած կենօք եւ գղիմեալս վերսրին հարկդ հայրենի ոչ անրես առնել եւ ի բաց մերժել, այլ կրկին գլուսեղէն զգեցուցանել պարմունճան»։

Նեղինակը կրկին իր ջերմեռանդ աղոթքն ուղղելով առ Աստվածամայրը՝ աղերսում է նրանից մայրական իրավունքով միջնորդ լինել իր միածին Որդու մոտ՝ մեզ համար մշտապէս բարեխոսությամբ. «Բարեխօսեա առ Որդիդ քո եւ Աստուծոյ իմ, վասն հոգնամեղ եւ բիրապարպ պարծապարտիս, թողույ գհանցանս գոր գործեալ եմ։ Եւ մարնեսէր հաշտության զանճառելք խոնարհութիւն... եւ նովաւ յայցես գթողութիւն պարտեաց առագարիպ եւ լեռնահանգեւր սխալանց եղեռնականիս»։

Ամփոփելով. «Բան գովեստի պարմագրաբարը...» Գրիգոր Սկեռացու արձակի լավագույն գործերից է եւ հայ միջնադարյան մարտնագրության մեջ Տիրամորը փառաբանող գեղեցիկ նմուշներից մեկը։